

**ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԻՄԱՍՏԱԶԱՏԻՉ ԴԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ, ՌՈՒՍԵՐԵՆԻ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆԻ
ԳՈՒՆԱՆԻՇ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Հ.Զ.ՂԱԶԱՐՅԱՆ

Բայական դարձվածքների անվանական և բայական բաղադրիչներն ունեն ձևաբանական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ, որոնք տարբեր են տարբեր լեզուներում մասնավորապես Հայերենում, անգլերենում և ռուսերենում: Այսպես, օրինակ, գոյականական բաղադրիչները կարող են ունենալ թվի, իրի ու անձի, հոլովի քերականական կարգեր Հայերենում, ռուսերենում և անգլերենում, սեռի քերականական կարգը՝ ռուսերենում, հոգի քերականական կարգը՝ Հայերենում և անգլերենում:

Ածականներն ունեն համեմատության աստիճանների, իսկ բայական բաղադրիչները՝ սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի և թվի, ինչպես նաև Հաստատական-ժխտականի քերականական կարգերը նշված երեք լեզուներում: Անգլերենում և ռուսերենում առկա է նաև կերպի քերականական կարգը:

Այժմ տեսնենք, թե ինչպես են գործում քերականական այս կարգերը գուցե մի քանի բաղադրիչներով բայական դարձվածքներում Հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Հոգի քերականական կարգն անգլերենում և Հայերենում ունի իմաստազատիչ դեր գուցե մի քանի ածականներ պարունակող բայական դարձվածքներում, այն դեպքում, երբ գուցե մի քանի ածականն օգտագործվում է գոյականաբար: Եթե այն օգտագործվի առանց որոշյալ հոգի, ապա դարձվածքն ընդհանրապես կզրկվի դարձվածային արժեքից՝ գրի սև ու սպիտակը չըռկել, չտարբերել (անգրագետ լինել), կարմիրը դուրսն աճել, սևը նեղսր (տխրությունը ցույց չտալ), սևը սպիտակից ջրկել (1. կարդալ, գրել իմանալ, 2. տրամաբանել), *disappear into the blue* (անհետանալ երկնքում), *climb/go into the red* (պարտքերի մեջ ընկնել):

Հայերենում կան նաև դարձվածքներ, որոնցում գոյականաբար գործածվող գուցե մի քանի ածականը կարող է օգտագործվել և՛ որոշյալ հոգով, և՛ առանց դրա՝ ամենեին չիմաստափոխվելով, օրինակ՝ կարմիր(ը) կապել (1. ամուսնացնել, 2. սպանել), կանաչ-կարմիր(ը) կապել (ամուսնացնել):

Նշված դեպքերը շատ սակավաթիվ են, և գուցե մի քանի ածականները ճշող մեծամասնությամբ գործածվում են առանց հոգի, այսպես, օրինակ՝ կարմիր կանչել (հարսանիքում փեսայի համար փող հավաքել), սպիտակ երևալ (պարգերես լինել), կանաչ հագնել (կանաչել, կանաչով պատվել):

Անգլերենում շատ սակավաթիվ են գուցե մի քանի բաղադրիչներով այն բայական դարձվածքները, որոնցում գոյականաբար օգտագործված ածականներն առանց հոգի են կամ ուղեկցվում են անորոշ հոգով: Այդպիսի դարձվածքների օրինակներ են՝ *put up a black* (թույլ տալ վրիպում, անտակտություն), *know black from white* (սևն ու սպիտակը ջրկել/իմանալ), *be dressed in black* (սգո զգեստ հագնել), *call/make white black* (սևին

սպիտակ ասել), win/get one's blue (ընդգրկվել Համալսարանական սպորտային թիմում)։

Թվի քերականական կարգը նույնպես իմաստազատիչ գեր ունի հիշյալ երեք լեզուներում։ Գոյականաբար օգտագործված գունանիշ ածականները միշտ լինում են եզակի թվով։ Այն դարձվածքները, որոնցում վերը նշված ածականները կարող են գործածվել միայն հոգնակիով կամ ե՛կ եզակիով, ե՛կ հոգնակիով, չափազանց հազվադեպ են հանդիպում՝ սև հագնել, սևեր հագնել (սգո գգեստ հագնել), have a fit of the blues (վատ տրամադրության մեջ լինել), give sb the blues (թախիծ, տխրություն բերել մեկին), sing the blues (անընդհատ բողոքել)։

Հոլովի քերականական կարգը գործում է հետևյալ կերպ։ Անգլերենում գոյականաբար գործածված ածականները դրվում են միայն ուղղական հոլովով fire into the browm (կրակել ամբոխի վրա), be in the red (պարտք ունենալ), get out of the black (պարտքերի մեջ ընկնել)։

Հայերենում բայական դարձվածքների գունանիշ բաղադրիչը (գոյականաբար գործածված) կարող է, թեև հազվադեպ, օգտագործվել տարբեր հոլովներով՝ որոշյալ կամ անորոշ առումներով՝ սևը տալ (գժբախտացնել), կանաչից տալ (կանաչ երևալ), կանաչով պատվել (կանաչապատվել), կապ(ույ)տին տալ (կապույտ երևալ), կանաչի ընկնել (սկսել արածել), սպիտակ երևալ (պարզերես երևալ), սևը սպիտակից տարբերել (տեսնել, հասկանալ ճշմարտությունը)։

Ինչպես մյուս անվանական, այնպես էլ բայական դարձվածքներում որոշիչ պաշտոնում գունանիշ ածականներն օգտագործվում են միայն դրական աստիճանում, այլապես դարձվածքը կկորցնի դարձվածային արժեքը։ Ստորև բերում ենք մի քանի օրինակ՝ put/roll out the red carpet (գորգը փռել հարգված այցելուի համար), be in a brown study (մտածմունքների մեջ ընկնել), give somebody the green light (կանաչ ճանապարհ տալ), see pink elephants (ուժեղ հարբած լինել), սև աղվես դառնալ (հազվադեպ երևալ, գալ), կանաչ ճանապարհ տալ (ազատ գործելու հնարավորություն տալ), напутѣя Ѧ о зеленого змия (թունգ հարբել), напутѣя Ѧ о белоѦ зорѦ ку (թունգ հարբել)։

Ռուսերենում գունանիշ ածականի սեռը, թիվն ու հոլովը անմիջականորեն կախված են գոյականական այն անգամի սեռից, թվից և հոլովից, որին այն լրացնում է смотреть сквозь розовые Ѧ ку (վարդագույն ակնոցով նայել), прохѦд ить красной ииѦю (կարմիր թելի պես անցնել), ч Ѧрная кошка пробежала (սև կատու է անցել), вид еть все в ч Ѧрном свете (սև լույսով տեսնել), пусиить красного петуха (հրդեհել), открываиъ зеленую улуѦу (կանաչ ճանապարհ բացել), грозитѣя красным петухом (սպառնալ հրդեհով)։

Ինչպես նշեցինք, գունանիշ ածականներ պարունակող բայական դարձվածքներում, մյուս բայական դարձվածքների նման, բայական բաղադրիչներն ունեն սեռի, եղանակի, կերպի, ժամանակի, դեմքի ու թվի և հաստատական-ժխտականի քերականական կարգեր։

Սեռի քերականական կարգը շատ կարևոր հատկանիշ է Հայերենում: Դիմավոր բայական դարձվածքի բայ բաղադրիչը լինի դիմավոր, թե անդեմ, ունի իր սեռը: Բայական դարձվածքները, ինչպես սովորական շարահյուսական կապակցությունների բայ բաղադրիչները, կարող են լինել անցողական և անանցողական: Երբեմն բավականին դժվար է հստակորեն որոշել դարձվածային միավորի բայ բաղադրիչի սեռը, քանի որ որոշ բայեր մի սեռի են պատկանում ազատ բառակապակցություններում և բոլորովին այլ սեռի՝ դարձվածքի կազմում: Երբեմն անանցողական բայը կարող է դառնալ անցողական, բայց ավելի հաճախ անցողական բայն է դառնում անանցողական: Բերենք մի քանի նման օրինակ Հայերենում՝ կտրել-կանաչ կտրել, կանգել-կարմիր կանգել, երևալ-սպիտակ երևալ, կապել-սև կապել:

Բայի սեռը հաճախ իմաստազատիչ դեր ունի դարձվածքների կազմության գործում: Այստեղ գործում են անանցողական, → անցողական՝ չեզոք → ներգործական հակադրություններ: Դրանք դրսևորվում են բայ բաղադրիչի սեռափոխությամբ, հիմքերի և արմատների փոփոխությամբ, տալ բայի հարադրությամբ: Դիտարկենք այդ հակադրությունները գունանիշ բաղադրիչներով բայական դարձվածքներում:

ՑԳ (սեռանիշ) ցուցչի միջոցով բայը չեզոքից վերածվում է ներգործական սեռի բայի, այսպես, օրինակ՝ սիրտը սևանալ-սիրտը սևացնել, օրը սևանալ – օրը սևացնել: Օրինակներից ակնհայտ է դառնում, որ երկրորդ շարքի դարձվածքներում առկա է ներգործող անձը, մինչդեռ առաջինում ենթական ինքն է իր վրա կրում գործողությունը:

Հայերենում հանդիպում են նաև այնպիսի դարձվածքներ, որոնցում ց սեռային ցուցիչն իմաստազատիչ դեր չի խաղում: Այդպիսի դարձվածքների օրինակ կարող է ծառայել հետևյալ դարձվածքը՝ աչքի լույսը սպիտակել – աչքի լույսը սպիտակեցնել:

Սեռային հակադրությունները դրսևորվում են նաև հիմքերի և արմատների փոփոխությամբ այսինքն, երբ միևնույն իմաստն արտահայտելու համար տարբեր հարացուցային ձևերում տարբեր արմատներ և հիմքեր են կիրառում: Այդ հակադրությունները կատարվում են լինել-անել, գալ-րեքել, ընկնել-զցել, դառնալ-անել և այլ տարարմատ բայերով, այսպես օրինակ՝ օրը սև լինել – օրը սև անել, գլխին սև գալ-գլխին սև բերել, կանաչ տերևից ընկնել-կանաչ տերևից զցել, երեսը սպիտակ լինել-երեսը սպիտակ անել: Առաջին շարքի դարձվածքները պատկանում են չեզոք, իսկ երկրորդ շարքի դարձվածքները՝ ներգործական սեռին:

Սեռային հակադրությունները կատարվում են նաև տալ բայի հարադրությամբ, որը կորցնում է իր բայական ինքնուրույն նշանակությունը՝ ձեռք բերելով սեռանիշ արժեք: Տալ բայի գործածությունն ավելի է ընդգծում պատճառականության իմաստը: Անհրաժեշտ է նշել, որ գունանիշ

¹ Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից Հայերենի դարձվածաբանություն, Ե., 1978, էջ 149:

² Խ. Գ. Բադիրյան, Ժամանակակից Հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986, էջ 227:

բաղադրիչներով դարձվածքների շարքում տալ բայի պատճառական իմաստով կազմված դարձվածքներ չեն հանդիպում:

Հայերենում գործում է նաև անցողական → անանցողական՝ ներգործական → կրավորական հակադրությունը: Երբ խոսողը ցանկանում է մատնանշել գործողությունը կատարողին, ապա, բնականաբար, օգտագործում է ներգործական կառույցի բայական դարձվածք: Դրան հակառակ, եթե նա նպատակ ունի նշել կրող առարկան, ապա օգտագործի կրավորական կառույց, որի դեպքում բայը կստանա կրավորական վ սեռանիշ ածանցը: Նշենք, որ կրավորական կառույցներում ավելի լավ են արտահայտվում պատճառահետևանքային կապերը՝ Վ սեռանիշ ածանցը երբեմն ունենում է իմաստազատիչ դեր, այսինքն՝ վ ածանցով կամ առանց դրա օգտագործելիս այս կամ այն դարձվածքը կարող է զրկվել դարձվածային արժեքից, բայց ավելի հաճախ հիշյալ ածանցի օգտագործումը բոլորովին չի փոխում դարձվածքի իմաստը սև քարին գրել-սև քարին գրվել, սպիտակ դրոշակ րարծրացնել-սպիտակ դրոշակ բարձրացվել, կանաչով պատել-կանաչով պատվել, դուռը սև քարով շարել-դուռը սև քարով շարվել, կարմիր թելի պես անցկացնել-կարմիր թելի պես անցկացվել:

Կան միևնույն կազմն ունեցող դարձվածքներ, որոնց ներգործական և կրավորական ձևերն իրարից տարբերվում են թե՛ իմաստով, թե՛ նշանակությամբ, օրինակ՝ սևն ու սպիտակը ջոկել դարձվածքը նշանակում է քիչ թե շատ գրագետ լինել, մինչդեռ սևն ու սպիտակը ջոկվել կրավորական կառույցը նշանակում է տարբերությունը երևալ:

Հայերենում հանդիպում են նաև այնպիսի դարձվածքներ, որոնք կարող են հանդես գալ որպես չեզոք, ներգործական և կրավորական կառույցներ՝ երեսը սևանալ-երեսը սևացնել-երեսը սևացվել: Այս օրինակներում սեռանիշ ցն ցուցիչը և վ ածանցը իմաստազատիչ դեր չունեն: Այս դեպքում, եթե դարձվածքները մնում են իմաստային նույն դաշտում, ապա, կախված սեռից՝ փոխվում են դարձվածքների մասնավոր իմաստները:

Անգլերենում ևս գործում է սեռի քերականական կարգը՝ ներգործական → կրավորական հակադրությունը: Այստեղ դա կախված է դարձվածքի բայ բաղադրիչի անցողական կամ անանցողական լինելուց: Կան գոմանիշ բաղադրիչներով բայական դարձվածքներ, որոնց բայ բաղադրիչն օգտագործվում է միայն կրավորական սեռով՝ *be browned off with something* (ճանճրանալ ինչ-որ բանից), *be dressed in black* (սգո զգեստ կրել): Սակայն ավելի շատ են այն դարձվածքները, որոնք չեն կարող օգտագործվել կրավորական սեռով՝ *stand in a white sheet* (բոլորի մոտ խոստովանել), *have green fingers* (դալար մատներ ունենալ), *go green* (միջավայրի համար անվնաս ապրանքներ արտագրել), *climb into the red* (պարտքերի տակ ընկնել):

Կան նաև այնպիսի դարձվածքներ, որ կարող են օգտագործվել և՛ կրավորական, և՛ ներգործական սեռով՝ *put/roll out the red carpet, give sb the green light, tell blue stories* (անպատշաճ պատմություններ պատմել):

³ Պ. Ս. Բեդիրյան, Նշվ. աշխ., էջ 156:

Ռուսերենում բոլոր անցողական դարձվածքները, որոնք ի դեպ այնքան էլ չափ չեն, կարող են օգտագործվել թե՛ ներգործական, թե՛ կրավորական սեռով, սակայն պետք է նշել, որ նույնիսկ այդ դարձվածքները օգտագործվում են ներգործական սեռով՝ *пучком красной нити*, *держать в ершом теле* (վատ վերաբերվել մեկին):

Ստորոգական բայական դարձվածքներում չափ կարևոր գործոններ են եղանակի, ժամանակի, դեմքի ու թվի (Հայերենում, ռուսերենում և անգլերենում), կերպի (անգլերենում և ռուսերենում) քերականական կարգերը:

Հայերենի ստորոգական դարձվածքները կարող են Հանդես գալ բոլոր Հինգ եղանակներով, բայց այդ եղանակները Հավասարապես կիրառելի չեն: Օգտագործման ամենամեծ Հաճախականությունն ունեն սահմանական եղանակով օգտագործվող դարձվածքները: Սահմանական եղանակը դրսևորվում է ժամանակի, դեմքի, թվի ցուցիչներով, որոնք փոխադարձաբար կապված ու պայմանավորված են միմյանցով:

Կան գույնանիշ բաղադրիչներով այնպիսի դարձվածքներ, որոնք ունեն վերը հիշատակված քերականական կարգերի բոլոր հարացուցային ձևերը: Այդպիսի դարձվածքներ են՝ կյանքին վարդագույն ակնոցներով նայել (ամեն ինչ լավ պատկերացնել), կանաչ ճանապարհ տալ, կանաչ պսակը հյուսել (ամուսնանալ), կարմիր խնձոր ուղարկել (հրավիրել հարսնացուի ծնողներին), կարմիր թել կապել (նշանել): Նման դարձվածքներից մի քանիսը կարող են օգտագործվել նաև հաստատական-ժխտական ձևերով:

Թերի հարացույց ունեցող դարձվածքները Հայերենում ավելի չափ են: Դրանք կարող են օգտագործվել մեկ կամ երկու եղանակով ու մեկ-երկու ժամանակով: Այդպիսի դարձվածքներն են՝ սև կատու անցնել մեջներով (գժտվել), սև աղվես դառնալ, կանաչ տերևից ընկնել (վաղաժամ մեռնել), ագռավները սև կհագնեն (գարմանքի արտահայտություն), անուճը սև քարին գրվի (մեռնես), օրդ սև լինի (դժբախտ, թշվառ լինես), դուռը սև քարով շարվի (տունդ ավերվի, դժբախտանաս):

Ռուսերենում բայական դարձվածքները կարող են օգտագործվել տարբեր եղանակներով՝ սահմանական, ըղձական, հրամայական, ինչպես սովորական բայերը: Սակայն, ի տարբերություն վերջիններիս, բայական դարձվածքների կիրառությունը կարող է սահմանափակվել միայն մեկ եղանակով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ, եթե բայական դարձվածքներից շատերն օգտագործվում են հրամայական եղանակով, ապա գույնանիշ բաղադրիչներով բայական դարձվածքներն օգտագործվում են Հիմնականում սահմանական եղանակով՝ *напутая до зеленого змия, грозит красным петухом, чья ерш кошка пробежала, видят все в розовом свете* (վարդագույն ակնոցով տեսնել):

Անգլերենում ևս գույնանիշ ածականներ պարունակող բայական դարձվածքներն օգտագործվում են սահմանական եղանակով՝ *see the red light* (վտանգ զգալ), *cry/shout blue murder* (անտեղի վայնասուն բարձրացնել),

¹ А. И. Молотков, Основы фразеологии русского языка, Л., 1977, с. 136.

go into the red, mark with a white stone (նշիկ մի երջանիկ օր), blue one's money (վատնել, մսխել փողերը):

Կերպի քերականական կարգը գործում է ռուսերենում (совершенный вид -կատարյալ և несовершенный вид -անկատար) և անգլերենում (Simple-պարզ, Continuous-շարունակական, Perfect-վաղակատար և Perfect Continuous-վաղակատար-շարունակական):

Ռուսերենում կան գունանիշ բաղադրիչներով այնպիսի բայական դարձվածքներ, որ օգտագործվում են միայն կատարյալ կամ միայն անկատար կերպերում, բայց անհամեմատ ավելի մեծ քանակ են կազմում այնպիսիք, որոնք օգտագործվում են երկու կերպերում էլ: Այդպիսիք են՝ *давать/давать зеленую улицу* (կանաչ ճանապարհ տալ), *открыть/открывать зеленую улицу*, *давать/давать белого каления* (հասցնել ինքնատիրապետման լրիվ կորստի), *давать/давать белого каления*:

Ռուսերենում կերպի քերականական կարգով է պայմանավորված ժամանակի քերականական կարգը: Անկատար կերպի բոլոր բայական դարձվածքները կարող են օգտագործվել երեք ժամանակներով՝ ներկա, անցյալ, ապառնի՝ *написать/написать о белой горе* և *грозили красным петухом*, *давать/давать в черном теле*:

Կատարյալ կերպ ունեցող բայական դարձվածքները կարող են օգտագործվել միայն ապառնի և անցյալ ժամանակներով:

Անգլերենում կերպի և ժամանակի քերականական կարգերը գործում են հետևյալ ձևով: Որոշ դարձվածքներ չեն կիրառվում Continuous և Perfect Continuous կերպերում, հետևաբար և այդ կերպերով կազմվող ժամանակային ձևերով, քանի որ նրանց բայ բաղադրիչները սովորական ազատ բառակապակցություններում էլ չեն օգտագործվում այդ կերպերի ժամանակաձևերում: Այդպիսի դարձվածքներ են՝ *know black from white* (սևը սպիտակից տարբերել), *have green fingers*, *see the red light*, *see pink elephants*:

Որոշ դարձվածքներ կարող են օգտագործվել տարբեր կերպերում և տարբեր ժամանակներում *wear yellow stockings* (խանդել), *give sb. the green light*, *go/be/climb into the red*:

Անհրաժեշտ է նշել, որ անգլերենում բայական դարձվածքները միշտ ունենում են թերի հարացույց:

Հայերենում ևս կան բայական դարձվածքներ (սահմանափակ քանակով), որ կարող են օգտագործվել ներկա, անցյալ, ապառնի ժամանակներով, այլ դարձվածքներ ունեն ժամանակային թերի հարացույց, իսկ որոշ դարձվածքներ էլ օգտագործվում են միայն մեկ ժամանակային ձևում:

Դեմքի քերականական կարգը նշված երեք լեզուների բայական դարձվածքներում ճշող մեծամասնությամբ կիրառվում է բայի սահմանական եղանակի եզակի երրորդ դեմքով: Այդ դարձվածքներով խոսողը պատկերավոր կերպով ներկայացնում է հասարակության կողմից ընդհանուր

⁵ А. В. Кукин, Фразеология современного английского языка, М., 1972, с. 219.

ճանաչում գտած, արժեքավորված իրավիճակ կամ ընդհանրական դատողություններ, սև շան հանդիպել (Հեգն. ամուսնանալ), կարմիր կովը կաշին չի փոխի, ազդավները սև կհագնեն, *белые рыи ку и ужуе трыд ы лкдхт*: Երկրորդ դեմքով Հանդես եկող դարձվածքները ավելի քիչ են (ժխտական նախադասության կառուցվածք ունեցող և հրամայական դարձվածքները, ինչպես նաև անեծքներն ու օրհնանքները): Առաջին դեմքով օգտագործվող դարձվածային միավորները չափազանց քիչ են՝ քազդ սև կապեմ (դու կամ ամուսինդ մեռնիք, դժբախտանաք), *и фхгозо кобеля не отмоешед обела*:

Թվի քերականական կարգը ուսերենում իմաստագատիչ գեր չի կատարում: Բայական դարձվածքների բայ բաղադրիչները կարող են օգտագործվել և՛ եզակի, և՛ Հոգնակի թվով *пучтал / пучтали красного петуха, грозилсЯ / грозилусь красным петухом*:

Անգլերենի դարձվածքներում բայ բաղադրիչի թվի քերականական կարգը դիտարկվում է միայն այն դեպքում, երբ այդ բայ բաղադրիչի մի մասը օժանդակ բայ է, բայ Հանգույց կամ լիմաստ բայ՝ օգտագործված սահմանական եղանակի պարզ ներկա ժամանակաձևի եզակի երրորդ դեմքով: Պարզ է, որ նման ձևով կարող են Հանդես գալ միայն ստորոգական արժեք ունեցող բայական դարձվածքների բայ բաղադրիչները՝ *they/he have/ has green fingers, he/they sees/see pink elephants, he/they is/ are coming out of the red*.

Հայերենում բայական դարձվածքների ճնշող մեծամասնությունում բայ բաղադրիչները օգտագործվում են եզակի թվով (Հոգնակի թվով գործածվողները շատ քիչ են): Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ այդ եզակի դարձվածքներից շատերն ընդհանրացման շնորհիվ ընկալվում են որպես Հոգնակի:

Տարածված են նաև այնպիսի բայական դարձվածքներ, որոնք անդեմ նախադասություններ են: Մրանցում խոսքը վերարերում է ընդհանուրին և ոչ թե որոշակի անձերի: Այսպիսի դարձվածքները կարող են լինել Հաստատական և Ժխտական: Հաստատական-Ժխտական Հակադրությունը նույնպես բավականին Հետաքրքիր է Հայերենում: Այստեղ գործուն դեր ունի դարձվածակազմիչ չ ժխտական մասնիկը:

Որոշ դարձվածքներ ունեն միայն ժխտական ձև, և դրանով օգտագործվելիս ստանում են ստորոգական արժեք և գործածվում Հարցական ձևով՝ սևն ու սպիտակը չընկել, գրի սևն ու սպիտակը չընկո՞ւմ էին, որ...:

Այն դարձվածքները, որոնք կարող են փոխարինվել ժխտական ձևերով դարձյալ ստորոգական են դառնում և վերածվում անդեմ ժխտական նախադասությունների, իսկ որոշ դարձվածքներ ժխտականով գործածվելիս Հաղորդակցական արժեք են ձեռք բերում և օգտագործվում Հարցական Հնչերանգով՝ հո մեջներվող սև կատու չի՞ անցել :

Շատ դարձվածքներում էլ Հաստատական-Ժխտական Հակադրությունն իմաստագատիչ դեր չունի և դարձվածքը կարող է օգտագործվել թե՛

⁶ Խ. Գ. Բադեկյան, նշվ. աշխ., էջ 247:

⁷ Նույն տեղում, էջ 252:

Հաստատական և թե՛ ժխտական ձեերով ամենևին չկրելով իմաստային փոփոխություն՝ կարմիր(ը)կապել/չկապել, սպիտակ երևալ/չերևալ, վարդագույն ակնոցով նայել/չնայել:

Բայական դարձվածային միավորները լեզվում կարող են հանդես գալ երկու ձևով: Մի դեպքում դրանք կարող են ունենալ անվանողական արժեք, և այս դեպքում նրանց գերադաս անդամը անորոշ դերբայն է: Այս դարձվածքները նախադասության մեջ կատարում են շարահյուսական պաշտոններ: Երկրորդ դեպքում, ստորոգման շնորհիվ, դարձվածքը ձեռք է բերում հաղորդակցական արժեք: Ունենալով քերականական կարգերի հարացուցային թերի կամ լրիվ ձևեր՝ այս դարձվածքները խոսքում կարող են ստանալ տարբեր նախադասությունների արժեք:

Հայերենում, ռուսերենում և անգլերենում բայական, այդ թվում նաև գունանիշ բաղադրիչներով բայական դարձվածքները նախադասության մեջ կարող են կատարել ինչպես բայական, այնպես էլ անվանական անդամների և նրանց լրացումների շարահյուսական պաշտոններ:

СМЫСЛОРАЗЛИЧИТЕЛЬНАЯ РОЛЬ ГРАММАТИЧЕСКИХ КАТЕГОРИЙ ГЛАГОЛЬНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ С ОБСЗНАЧАЮЩИМИ ЦВЕТ КОМПОНЕНТАМИ АРМЯНСКОГО, РУССКОГО И АНГЛИЙСКОГО ЯЗЫКОВ

А.З. КАЗАРЯН

Р е з ю м е

Глагольные фразеологические единицы с компонентами прилагательными, обозначающими цвет, широко употребляются не только в художественной литературе, но и в повседневной разговорной речи. Употребление фразеологизмов с «цветовыми» прилагательными делает речь выразительнее и колоритнее.

Компоненты вышеуказанных фразеологических единиц в армянском, русском и английском языках имеют те же морфологические и синтаксические свойства, что и другие глагольные фразеологизмы. Так, именные компоненты имеют грамматические категории падежа, числа (в армянском, русском и английском), рода (в русском), а глагольным компонентам присущи грамматические категории числа, лица, наклонения, времени, залога в армянском, русском и английском, вида — в русском и английском, а также другие категории. Эти категории имеют смысловую роль и в зависимости от их присутствия или отсутствия фразеологизм может потерять свое фразеологическое значение или приобрести новое.